Աշխատանքի ծածկագիրը 844811

ՈՐՈՇՈՒՄ

ք.Երևան 16.11.2025թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝
Արսեն Գեղամյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Հռիփսիմե Խաչատրյանի
Սուսաննա Գզոգյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) քննության առնելով դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունք թեստային առաջադրանքի 3-րդ հարցը:

3-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օժանդակող է համարվում նաև այն անձը, ով նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, սակայն մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում, անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդել է կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը:

Հաշվի առնելով խնդրի փաստական հագամանքները և վերոհիշյալ նորմի ձևակերպումը հանձնաժողովը գտնում է, որ Մ-ի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով, իսկ Տ-ի արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով, հետևաբար ճիշտ պատասխան պետք է դիտարկել «ա» տարբերակը և բողոքաբերին շնորհել մեկ միավոր:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունք թեստային առաջադրանքի 6-րդ հարցը:

6-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մեկ ուրիշին սեռավարակով հանցավոր ինքնավստահությամբ վարակելու համար:

Խնդրի փաստական հանագամքներից երևում է, որ Ռ-ն չի հանդիսացել բժիշկ, չի ունեցել համապատասխան բժշկական գիտելիքներ և մասնագիտական հմտություններ, զբաղվել է ինքնաբուժությամբ, և առանց բավարար հիմնավոր հիմքեր

ունենալու կարծել է, որ ապաքինվել է, սեռավարակ չունի, այսինքն դրսևորել է հանցավոր ինքնավստահություն՝ մեկ ուրիշին վարակելով:

Վերոգրյալը բավարար է գնահատելու համար, որ նրա արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Հաշվի առնելով խնդրի փաստական հագամանքները և վերոհիշյալ նորմի ձևակերպումը՝ հանձնաժողովը գտնում է, որ Ռ-ի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածով, հետևաբար ճիշտ պատասխան պետք է դիտարկել «ա» տարբերակը և բողոքաբերին շնորհել մեկ միավոր:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունք թեստային առաջադրանքի 7-րդ հարցը:

7-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշներ:

Խնդրի փաստական հանգամքներից երևում է, որ Բ-ի և Կ-ի արարքների հետևանքով Գ-ի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածով, իսկ դրա որակյալ մասում նախատեսված է մի խումբ անձանց կողմից տվյալ արարքը կատարելը, հետևաբար բողոքաբերի փաստարկների հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունք թեստային առաջադրանքի 14-րդ հարցը:

14-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը:

ՀՀ քրեական օրենսգրիք 452-րդ հոդվածի 3-րդ մասի և 167-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիաները հավասար են, հետևաբար խնդրի մեջ նկարագրված արարքը ենթակա է որակման հանցակազմերի համակցությամբ, ուստի բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունք թեստային առաջադրանքի 21-րդ հարցը:

21-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարող է համարվում այն անձը, որն անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա

կատարմանը մասնակցել է այլ անձի (համակատարողի) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Տ-ն հատուկ սուբյեկտ է և հանցանքը կատարել է միջնորդավորված ձևով, հետևաբար նրա արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով: Այսպիսով, բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունք թեստային առաջադրանքի 30-րդ հարցը:

30-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր են, քանի որ խնդրի մեջ նկարագրված արարքը կատարվել է զորամասում և հրամանատարի-պետի նկատմամբ, ուստի արարքն ուղղված է զինվորական ծառայության կարգի դեմ և ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 519-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ինչը բխում է Վճռաբեկ դատարանի Տիգրան Բեգլարյանի վերաբերյալ թիվ ՍԴ/0052/01/18 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներից:

Հետևաբար ճիշտ պատասխան պետք է դիտարկել «բ» տարբերակը և բողոքաբերին շնորհել մեկ միավոր:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 4-րդ հարցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 330-րդ հոդվածի համաձայն՝ կողմի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ մինչդատական վարույթում կամ դատարանում սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ տրված ցուցմունքի, ինչպես նաև դրան կցված հավելվածների (նկարների, գծագրերի, սխեմաների, լուսանկարների, ձայնագրությունների, տեսագրությունների, տեսաձայնագրությունների, նկարահանումների, տեսաֆիլմերի) հրապարակումը թույլատրվում է, եթե՝

1) մինչդատական վարույթում անձի ցուցմունքը, սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան, դեպոնացվել է.

2) առկա է ***էական*** հակասություն անձի՝ դատարանում և նախկինում տված ցուցմունքների միջև.

3) օգտվելով իր սահմանադրական իրավունքից՝ մեղադրյալը դատարանում ցուցմունք տալու ցանկություն չի հայտնել.

4) վկան կամ տուժողը դատարանի առջև ոչ իրավաչափորեն հրաժարվել է ցուցմունք տալուց.

5) անձը մահացել է կամ կորցրել է հաղորդակցվելու ունակությունը, և մինչդատական վարույթում ծանր **հիվանդության հիմքով տվյալ անձի ցուցմունքի դեպոնացման անհրաժեշտությունը** ողջամտորեն բացակայել է.

6) սույն օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անչափահաս տուժողը կամ վկան հոգեբանի առաջարկությամբ չի հարցաքննվում, եթե դա անհրաժեշտ է նրա իրավաչափ շահերի պաշտպանության համար, և

<u>պաշտպանության կողմը մինչդատական վարույթում հնարավորություն է ունեցել հարցեր տալու անչափահասին:</u>

Թեստի բ, գ և դ տարբերակներում կա անորոշություն, քանի որ լիարժեք չի ներկայացվել դատավարական օրենքով նախատեսված պայմանները, հետևաբար այդ անորոշությունը պետք է մեկնաբանել ի օգուտ բողոքաբերի, և նրա պատասխանը համարել ճիշտ և շնորհել մեկ միավոր:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 8-րդ հարցը:

8-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ փաստաթուղթ չհանդիսացող իրեղեն ապացույցները տնօրինվում են հետևյալ կանոններով՝ հանցագործությամբ անմիջականորեն ստացված դրամը, արժեք ունեցող այլ գույքը վերադարձվում են բարեխիղճ սեփականատիրոջը, իսկ եթե դրանք բարեխիղճ սեփականատեր չունեն, կամ դրանց սեփականատերն անհայտ է, ապա դրանք ուղղվում են հանցագործության հետևանքով պատճառված վնասի կամ վարութային ծախսերի հատուցմանը, իսկ եթե դրա անհրաժեշտությունը բացակայում է, ապա դրանք բռնագրավվում են:

Հաշվի առնելով վերոգրյալը բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 12-րդ հարցը:

12-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բացառությամբ դեպքի վայրի զննության, անձի բնակարանում ապացուցողական և վարութային այլ գործողություններ կարող են կատարվել դատարանի որոշմամբ կամ տվյալ անձի համաձայնությամբ: Ամեն դեպքում, բնակարանում խուզարկությունը, առգրավումը և դեպքի վայրի զննություն չհամարվող զննությունը կարող են կատարվել միայն դատարանի որոշմամբ:

Վերոգրյալից երևում է, որ բացի խուզարկությունից, առգրավումից և դեպի վայրի զննությունից, մյուս բոլոր գործողությունները կարող են կատարվել անձի համաձայնությամբ, հետևաբար բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 11-րդ հարցը:

11-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված նվազագույն իրավունքի իրականացումը վարույթն իրականացնող մարմնի վերադասի համաձայնությամբ կարող է հետաձգվել առավելագույնը 12 ժամով, եթե առկա են հիմնավոր

պատճառներ, որ այդ իրավունքի անհապաղ իրականացումը կարող է խոչընդոտել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կանխմանը կամ խափանմանը կամ հանգեցնել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների ոչնչացմանը կամ վնասմանը:

Վերոգրյալից երևում է, որ ձերբակալվածի իրավունքը կարող է սահմանափակվել, ոչ թե վարույթի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով, այլ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունը կանխելու կամ խափանելու կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների ոչնչացումը կամ վնասումը բացառելու համար:

Հետևաբար բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 14-րդ հարցը:

14-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Անչափահաս մեղադրյալի հարցաքննությունը կատարվում է պաշտպանի և հոգեբանի մասնակցությամբ: Անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը մասնակցելու իրավունք ունի նաև նրա օրինական ներկայացուցիչը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքով ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Հաշվի առնելով, որ անչափահասի հարցաքննությանը պետք է պարտադիր մասնակցի հոգեբանը, ուստի այդ պահանջի չպահպանելը հանգեցնում է ապացույցի անթույլատրելիությանը, քանի որ այն ձեռք է բերվել օրենքի էական խախտմամբ:

Հետևաբար բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 22-րդ հարցը:

22-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անձի նկատմամբ ավելի ծանր հանցանքի (հանցանքների) համար հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվում է, կամ նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխվում է, ապա կիրառվում է այն հանցանքի (հանցանքների) համար՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը, որով (որոնցով) հանրային քրեական հետապնդումը շարունակվում է: Այդ ժամկետը լրացած կամ մեկ ամսից պակաս լինելու դեպքում քրեական հետապնդումը չի կարող տևել ավելի, քան մեկ ամիս:

Միջդեռ քրեական հետապնդման ժամկետները կարգավորող նորմերի համեմատական վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը վարույթն իրականացնող մարմնին քրեական հետապնդման ժամկետը մեկ ամսով ավելացնելու

հնարավորություն է ընձեռնում այն դեպքում, երբ՝ -ավելի ծանր հանցանքի (հանցանքների) համար, -հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվում է, -արարքի իրավական գնահատականը փոխվում է:

Առաջին դեպքի համար օրինակ է, երբ անձին վերագրվում է մեկից ավելի հանցանքների կատարում, որոնցից մեկը մյուսից, ըստ ծանրության աստիճանի, ավելի ծանր է: Օրինակ, անձին վերագրվում է ծանր և առանձնապես ծանր հանցանքների կատարում, դրանցից առանձնապես ծանրի քրեական հետապնդումը դադարեցվում է, իսկ ծանրի ժամկետը լրացել է կամ մեկ ամսից պակաս է մնացել: Երկրորդ դեպքի համար օրինակ է այն, երբ անձին վերագրվում է, օրինակ, առանձնապես ծանր հանցանքի կատարում, այն վերաորակվում է ծանր հանցանքի, իսկ դրա ժամկետը լրացել է կամ մեկ ամսից պակաս է մնացել: Այսինքն, երկու դեպքում էլ խոսքը գնում է տարբեր ծանրության հանցանքների մասին, ընդ որում՝ այն պարագայում, երբ առավել ծանր հանցանքի համար օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը լրացած չէ: Նման պայմաններում՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքը մեկ այլ ծանր հանցանքի մեղադրանքով փոխելու դեպքում դատավարական օրենքի 192-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված «մեկամսյա ժամկետի» «լրացման» հնարավորություն սահմանված չէ:

Հետևաբար, վերը նշված նորմի հիշյալ մեկնաբանումը ևս անառարկելիորեն վկայում է այն մասին, որ արարքի իրավական գնահատականը փոխելիս՝ խոսքը կարող է գնալ բացառապես տարբեր ծանրության հանցանքների մասին, հակառակ մեկնաբանման պարագայում, անձը կարող է տևական ժամանակ գտնվել քրեական հետապնդման ներքո և վարույթն իրականացնող մարմինը արարքի իրավական գնահատականը նույն ծանրության հանցանքի փոխելով հնարավորություն կունենա լրացուցիչ ժամանակ ստանալ քրեական վարույթը դատարան հանձնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ բողոքաբերի փաստարկները հիմնավոր են և պետք է շնորհել մեկ միավոր:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 24-րդ հարցը:

24-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալը թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից, պարբերաբար չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամ էապես խոչընդոտել է վարույթին, ապա հսկող դատախազը կայացնում է գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշում:

Վերոգրյալից երևում է, որ օրենքով հստակ սահմանված են գրավը պետության եկամուտ դարձնելու հիմքերը, որտեղ բացակայում է նոր հանցանք կատարելու հիմքը: Հետևաբար բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է տարբերակ 2-ի դատավարական իրավունք թեստային առաջադրանքի 28-րդ հարցը:

28-րդ հարցի վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավոր են, քանի որ դատարանի կողմից վարույթի հանրային մասնակցից նյութեր պահանջելը, ինչպես

նաև բանավոր ընթացակարգով բողոքի քննարկմանը մասնակցությունը պարտադիր համարելը հայեցողություն է, մեկը մյուսի հետ կապակցված չէ, հետևաբար վարույթի հանրային մասնակիցը կարող է մասնակցել բողոքի քննարկմանը, սակայն նյութեր չներկայացնել, եթե դատարանն այն չի պահանջել:

Հետևաբար հարցում ճիշտ պատասխանը բացակայում է, ուստի բողոքաբերին պետք է շնորհել մեկ միավոր:

1-ին իրավական խնդիր

Բողոքաբերի կողմից բարձրացրած հարցը ընդունելի է և համամիտ ենք նրա արարքին տրված քրեաիրավական գնահատականի հետ և հետևաբար մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքների միավորը ավելացնել ևս մեկ միավորով:

3-րդ իրավական խնդիր

Բողոքաբերի կողմից երեք անձանց արարքների վերաբերյալ տրված որակումները սխալ են, հետևաբար գնահատականը փոփոխման ենթակա չէ:

2-րդ իրավական խնդիր

2-րդ հարց

Բողոքաբերը չի արդարադարձել տուժողի մասով բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն ստանալու մասին քննիչի միջնորդությանը և այն բավարարելու մասով դատարանի որոշման իրավաչափությանը: Հետևաբար գնահատակը ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 30.06.2025 թվականի թիվ ԲԴԽ-46-Ո-91 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 844811 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքի՝ 3-րդ, 6-րդ, 30-րդ և դատավարական իրավունքի՝ 4-րդ, 22-րդ, 28-րդ հարցերի համար շնորհել մեկական միավոր, այսինքն՝ 6 միավոր, արդյունքում թեստային առաջադրանքների ընդհուր հանրագումարը կազմում է 37 միավոր: 1-ին իրավական խնդրի համար շնորհվել է 1 միավոր, ուստի իրավական խնդրի միավորը կազմում 25 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝